



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 16 ՄԱՅԻՍ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.

քու անասինման գթութեամբդ իմ յացանքս ներէ ինձի:

Անբողջութեամբ մաքրէ զիս իմ անօրէնութենէս,

եւ իմ մեղքէս զիս սրբէ:

Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,

լուս զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:

Յնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,

եւ փառապած ոսկորներս պիտի ցնծան:

Նկատի մի՛ առներ մեղքերս,

ներէ բոլոր յանցանքներս:

Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ով Աստուած,

նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:

Ներկայութենէդ մի՛ զրկեր զիս, Տէր,

եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ զիս:

Փրկութեանդ ցնծութիւնը Կուր ինձի,

եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:

Որպէսզի անօրէններուն սորվեցնեմ քու կամքդ,

եւ մեղաւորները քեզի դառնան:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոսիանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 12:1-11)



ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՊԱՐԳԵՒՆԵՐԸ (12:1-11)

Հարցերը փակաին կը շարունակուին: Նախապէս ալ քեզանք 7րդ եւ 8րդ գլուխներու պարագային, որ Կորնթացիները որոշ հարցեր ունէին եւ ըստ այնմ նամակ գրած էին կամ բերանացի հարցուց Առաքեալին, որպէսզի ուղղութիւն փար իրենց: Հիմա ալ, 12-14 գլուխներով, Առաքեալը պիտի անդրադառնայ հոգեւոր պարգեւներու մասին (1 հմր): Այս հարցին շուրջ Պօղոս Առաքեալ կարեւոր կը նկատէ, որպէսզի ճիշդ ձեւով հասկնան, ու մանաւանդ ճիշդ ձեւով օգտագործեն: Որովհետեւ այնպէս կը թուի, թէ համայնքէն ներս կային ոմանք որ իրենք զիրենք օժտուած կը զգային հոգեւոր պարգեւներով, սակայն այդ պարգեւները փոխանակ ճիշդ ձեւով օգտագործելու, կը չարաշահէին: Արդիւնքը կ'ըլլար հպարտութիւն, բարձրամտութիւն, ցուցադրութիւն, ուստի անկարգութիւն: Իսկ ուրիշներ, որոնք եթէ չ'ունէին այդ շնորհքը, անոնց համար ալ՝ փրփմութիւն, նախանձ: Ուրեմն կարծէք գնահատանքի արժանի էր այն շնորհքը որ երեւելի էր: Անոր համար ալ Պօղոս Առաքեալ կը ճշդէ գնահատանքի կշիռը: Որովհետեւ գնահատելի է այն շնորհքը որ շինիչ արդիւնք ունի եւ ոչ թէ պարզապէս արտաքին փայլք: Անոր համար ալ գերագոյն շնորհքը Սէրն է, առանց որուն միւսները արժէք չունին: Որովհետեւ բոլոր շնորհներն ալ ուրիշ բան չեն եթէ ոչ ժամանակաւոր, պարզապէս Աստուծոյ ներկայութիւնը զգալի դարձնելու համար: Ինչպէս որ էր պարզապէս Քրիստոսի կատարած հրաշագործութիւններուն: Ահա այնքան լուրջ է հարցը, որուն համար ալ Առաքեալը լայն փեղ կու փայ բացատրելու, որովհետեւ անկէ եկած վնասը մեծ է, պարճառ դառնալով պառակտումի, հակառակութեան: Ի վերջոյ, այս փրուած շնորհները որքանո՞վ Քրիստոսի փառքն է որ կը պատմեն, եւ ոչ թէ անձին:

«Մինչ հեթանոս էիք անշունչ կուռքերէն մէկէն միւսը կը քաշկոպուէիք» (2 հմր): Հետաքրքրական արտայայտութիւն մըն է որ Առաքեալը կ'ընէ ցոյց փալով անոնց անցեալի վիճակը: Ինչպէս կարելի է հասկնալ այս արտայայտութիւնը:

1. Երբ հեթանոս էիք անխօս կուռքերու կ'երթայիք պարզամտներ ստանալու, մինչ հիմա դուք պարզամտախօս էք:
2. Յովհանն Ոսկեբերան այսպէս կը բացատրէ այս բաժինը: «Հեթանոս պարզամտախօսները, չար դեւերէ փիրապետուած, կը մոլին, կը փրփրին գուշակութիւններ ընելու համար, եւ չեն գիտեր ինչ կը խօսին: Մինչ ճշմարիտ մարգարէն արթուն մտքով կը պարզամտէ»:
3. Ոմանք կը բացատրեն ըսելով. «Երբ հեթանոս էիք այս շնորհները չունէիք, իսկ հիմա առաքապէս ունիք»:
4. Իսկ ուրիշներ կը բացատրեն ըսելով. «Անցեալին եթէ պարզամտներ կը ստանայիք, այդ պարզամտները փուռը Սուրբ Հոգին չէր, այլ՝ չար դեւերը: Հիմա ալ զգուշ եղէք, որ չըլլայ թէ ձեր մէջ սարդին այդպիսի մարդիկ, եւ դուք երեւոյթէն դաբելով խաբուիք եւ մոլորիք»: Նոյնը պիտի զգուշացնէր Քրիստոս ըսելով. «Զգոյշ եղէք»:

Ահա զանազանելու նշանը. «Ուե՛տ մէկը որ Աստուծոյ Հոգիէն մղուած կը խօսի՝ չի կրնար ըսել՝ «Նզովեալ ըլլայ Յիսուս»: Նոյնպէս ալ, ոչ ոք կրնայ խոստովանիլ թէ «Յիսուս Տէր է», եթէ Սուրբ Հոգին չունենայ» (3 հմր): Որովհետեւ մեր շուրջ կան եւ բարի եւ չար ներգործութիւններ, անոր համար ալ Առաքեալը կը զգուշացնէ եւ նշան է որ կու փայ, որպէսզի յանկարծ չըլլայ թէ շփոթեն հրաշալին եւ աստուածայինը: Որովհետեւ ամէն հրաշալի երեւոյթ աստուածային չէ:

Առաքեալը ցոյց կու փայ, որ «Շնորհները զանազան են, բայց նոյն Հոգին է փուռը: Զանազան հոգեւոր պաշտօններ կան, բայց նոյն Տէրն է բաշխողը: Ծառայելու զանազան կարողութիւններ կան, բայց Նոյն Աստուածն է որ կու փայ իւրաքանչիւրին» (4-6 հմր):

Զանազան շնորհներ – Նոյն Սուրբ Հոգին է փուռը

Զանազան հոգեւոր պաշտօններ – Նոյն Տէրն (Քրիստոս) է բաշխողը

Ծառայելու զանազան կարողութիւններ – Նոյն Աստուածն (Հայրը) է որ կու փայ իւրաքանչիւրին:

Այս հարուածին մէջ կայ Ամենասուրբ Երրորդութեան դէմքերը՝ Սուրբ Հոգի, Քրիստոս, Հայրն Աստուած: Շնորհք կը նշանակէ ձրի փրուած պարգեւ, կարողութիւն, որ կը նշանակէ ոչ շար սրացողը իրաւունք ունի հպարտանալու, ոչ ալ նուազ սրացողը՝ փրփնջալու: Այլ երկուքն ալ պարզապէս պէտք է շնորհակալ ըլլան փուռըն եւ փրուածը օգտագործեն ճիշդ նպատակին համար:

«Մուրբ Հոգին ամեն մէկուն մէջ կը յայտնուի փարբեր ձեւով մը, հասարակաց օգուտին համար» (7 հմբ): Հերեւաբար այս բոլորը ուրիշ բան չեն եթէ ոչ Մուրբ Հոգին ներգործութիւնը եւ յայտնութիւնը: Ուստի իւրաքանչիւր հաւաքացեալի փրուած է շնորհ մը, որպէս նշան ՄուրբՀոգիի ներկայութեան ու ներգործութեան: Երկրորդ եւ ամենակարեւորը, այդ շնորհները փրուած են բոլորի օգուտին համար, եւ ոչ թէ անհատին, այլ՝ Եկեղեցւոյ օգուտին: Սա կը նշանակէ թէ շնորհքը կը փրուի ոչ թէ ըստ արժանւոյն, այլ՝ ճրի:

Եւ ահա Պօղոս Առաքեալ կը թուէ այդ շնորհները: **«Մուրբ Հոգին մէկուն կու փայ կարողութիւն իմաստութեամբ յորդորելու:** Այս պարագային Աստուծոյ կամքը հասկնալու ճշմարտութեանց խորունկ թափանցունը ունենալու եւ ըստ այնմ պարագաները կշռելու եւ արժեւորելու:

Ուրիշին հոգեւոր գիտութեան հասնելու եւ ուսուցանելու: Հերաքրքրականօրէն Պօղոս Առաքեալ այս շնորհներուն կ'աւելցնէ ուսուցանել, այսինքն՝ ոչ թէ միայն ունենալու, այլ փրուածէն նաեւ ուրիշին բաժին հանելու:

Ուրիշի մը հաւաքք: Այսպէղ խօսքը սկզբնական հաւաքքի մասին չէ, այլ՝ ներքին այն ուժակաւորութեան, հոգեւոր կարողութեան:

Բժշկելու զօրութիւն: Շնորհ մը, որ կրնայ օգնել անձին փեսնելու պարահաճին մէջ Աստուծոյ ներկայութիւնը եւ այդպէս դարձի գալու:

Հրաշագործել: Այս պարագային, ոչ անպայման բժշկութեան հետ կապուած, այլ՝ մեռելներու յարութիւն, դէտերը հալածել, եւ կամ բնութեան ոյժերուն դէմ:

Մարգարեական պարգամախօսութիւն: Այսպէղ մարգարեութիւնը գուշակութեան մասին չէ, եւ կամ գալիքին մասին որոշ փեղեկութիւններ ունենալու մասին չէ, այլ որքան Աստուծոյ խօսնակը ըլլալու եւ Անոր պարգամները փոխանցելու, ինչպէս անցեալի մարգարէները կ'ընէին հեղինակութեամբ ու զօրութեամբ:

Հոգիէն փրուած պարգեւները ճանչնալու կարողութիւն: Այս շնորհով ճանչնալու թէ ինչ բան Աստուծմէ կամ Մուրբ Հոգիէն փրուած է եւ ինչ բան ոչ:

Լեզուներ խօսելու շնորհք: Այս շնորհքը, որ նաեւ փրուեցան Մուրբ Հոգիի գալուստի օրը Առաքեալներուն, որպէսզի կարենային փարբեր լեզուներով քարոզելու Աւեփարանը, որուն համար ներկաները կը զարմանային:

Լեզուներով խօսուածը մեկնաբանելու կարողութիւն: Բաւարար պիտի չըլլայ միայն լեզուներ խօսիլը, եթէ երբեք այդ խօսուածը չբացատրուի, չմեկնաբանուի, որպէսզի հասկնալի ըլլայ լսողին, եւ լսողը ըստ այնմ «ամեն» ըսէ:

Նոյն Հոգին է փրուողը, ինչպէս որ Ինք կ'ուզէ» (8-11 հմբ): Հերաքրքրականօրէն Պօղոս Առաքեալ այս արտայայտութեամբ կ'ուզէ ցոյց փայ, թէ ինչ որ Հայրը կ'ուզէ, նոյնը Մուրբ Հոգին կ'ուզէ, նոյնը Որդին կ'ուզէ: Երկրորդ, եթէ Մուրբ Հոգին կ'ուզէ, կը կամենայ կը նշանակէ անձնաւորեալ է, եւ ոչ թէ պարզապէս երեւոյթ մը: Ի վերջոյ, առաջին այս բաժինը կու գայ ցոյց փայլու, որ եթէ այս բոլորը շնորհներուն փոխը Մուրբ Հոգին ինքն է, ի գուր է հպարտանալ, կամ փրփնջալ ու դժգոհիլ կամ նախանձիլ: Մուրբ Հոգին ինքն է որ կը ճշդէ որու ինչ փայ, եւ ոչ թէ անձին արժանաւորութիւնը: Ուրեմն միայն շնորհակալ ըլլալու Աստուծոյ փրուածին համար եւ ըստ այնմ օգտագործել ճիշդ ձեւով, ճիշդ նպատակին համար, բոլորին օգուտին համար: